


11
ԱՊՐԻԼ
2025



ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՄԻԵԴ
2023 ԵՎ 2024 ԹԹ. ՎՃԻՌՆԵՐԸ
«ՏՈԴՈՐՈՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ» 13.07.2021 ՎՃՈՒ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Վարդան Պողոսյան
Միջազգայնագետ, քաղաքագետ (M.A., Bonn)



«Յորդանովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» (դիմումներ թիվ 265/17 և 26473/18) գործը վերաբերում է 2012 թվականին Բուլղարիայում ընդունված օրենսդրության կիրառմանը, որը նախատեսում է պետության կողմից «ապօրինի կերպով ձեռք բերված» ենթադրյալ ակտիվների բռնագանձում: Եվրոպական դատարան ներկայացված բոլոր դիմումատուների գույքերը առգրավվել են քրեական և վարչական իրավախախտումների համար դատապարտվելուց հետո, թեև չի արձանագրվել որևէ հաստատված կապ հանցագործության (իրավախախտման) և համապատասխան գույքի միջև: Հենվելով, մասնավորապես, Մարդու իրավունքների

⁴ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-227713%22%5D%7D>

Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության պաշտպանություն) վրա՝ դիմումատուները բողոքել են, որ իրենց ունեցվածքի բռնագանձումն անարդար է և կամայական:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) խախտում: Դատարանի այս վճիռը ամբողջությամբ հենվում է «Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» գործով ուղենիշային վճռի վրա: Դատարանը «Յորդանովը և մյուսները» գործով եկել է այն եզրահանգմանը, որ դիմումատուների գույքի բռնագրավումը անհամաչափ է, քանի որ դատարանները չեն նշել այն արգելված վարքագիծը, որը հանգեցրել է գույքի ապօրինի ձեռքբերմանը և չեն հաստատել գույքի ձեռքբերման և վարքագծի միջև կապը:

Դիմումատուների գույքի բռնագանձման համար հիմք է ծառայել 2012 թվականին ընդունված «Ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագրավման մասին» օրենքը (Закон за отнемане в полза на държавата на незаконно придобито имущество, вж. 2012 թվականի օրենք): Այդ օրենքը փոխարինել էր 2005 թվականի «Հանցագործությունից ստացված եկամուտների բռնագանձման մասին» (Закон за отнемане в полза на държавата на имущество, придобито от престъпна дейност, вж. 2005 թվականի օրենք) օրենքին: 2005 և 2012 թվականների օրենքների միջև հիմնական տարբերությունն այն է, որ վերջինս նախատեսում է «ապօրինի» գույքի բռնագրավում և ոչ պարտադիր կերպով՝ հանցագործությունից ստացված գույքի բռնագանձում:

Եվրոպական Դատարանը 2023թ. սեպտեմբերի 26-ի վճռում նշում է, որ իր նախադեպային իրավունքից բխող կիրառելի ընդհանուր սկզբունքներն ամփոփված են «Տոդորովը և մյուսները» գործում: Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի՝ սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն պետք է արդար հավասարակշռություն հաստատի հանրության ընդհանուր շահերի պահանջների և անհատական իրավունքների պաշտպանության պահանջների միջև՝ միաժամանակ ընդունելով, որ պետությունները, այնուամենայնիվ, քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ռազմավարության միջոցառումներ կիրառելիս պահպանում են գնահատման լայն հայեցողություն (վճռի կետ 112):

«Տոդորովը և մյուսները» գործով վճռում Եվրոպական դատարանը մատնանշել էր որոշ թերություններ 2005 թվականի օրենքում և դրա կիրառման եղանակում, որոնք շատ իրավիճակներում կարող էին նշանակել, որ դիմումատուները ստիպված են եղել չափազանց մեծ բեռ կրել, և որ դատավարության հավասարակշռությունը թեքվել է հոգուտ պետության: Իր ներկա վճռում Եվրոպական դատարանն ընդգծում է. «Դատարանը մտահոգված է, որ այս թերությունների զգալի մասը պահպանվել է 2012թ. օրենքում» (վճռի կետ 114):

2012 թվականի օրենքով նախատեսված հիմնական հանցագործությունների ցանկը, ըստ Եվրոպական դատարանի, մնում է շատ լայն և համեմատելի է 2005 թվականի օրենքով նախատեսված հանցագործությունների հետ: Այսպես, 2012 թվականի օրենքով վարույթը կարող է հարուցվել ոչ միայն առանձնապես լուրջ հանցագործությունների, ինչպիսիք են կազմակերպված հանցագործության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, պետական ծառայության կոռուպցիայի կամ փողերի լվացման կամ այլ հանցագործությունների պատճառով, որոնց պարագայում կարելի է ենթադրել, որ դրանք միշտ եկամուտ են բերում, այլ մի շարք այլ հանցագործությունների և վարչական իրավախախտումների համար (վճռի կետ 115):

2012 թվականի օրենքի կիրառման շրջանակը լայն է նաև այն ժամանակաշրջանների առումով, որոնց վրա այն կիրառվում է: Ի տարբերություն 2005 թվականի օրենքի, որը վերաբերում էր վերջին քսանհինգ տարվա ընթացքում ձեռք բերված ակտիվներին, 2012 թվականի օրենքը նախատեսում է տասը տարի ժամկետ, որի համար մեղադրյալները պետք է հաստատեն իրենց եկամուտների և ծախսերի օրինականությունը (տե՛ս վերը նշված 46-րդ պարագրաֆը): Ըստ Եվրոպական դատարանի՝ դա «զգալի տևողություն է»: Ավելին, 2012 թվականի օրենքը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ հիմնական հանցագործությունները կատարվել են դրա ուժի մեջ մտնելուց տարիներ առաջ (վճռի կետ 116):

Ինչպես 2005 թվականի օրենքի դեպքում, Դատարանը ողջամիտ է համարում ենթադրել, որ 2012 թվականի օրենքի կիրառման բավական լայն շրջանակը, դրա հետադարձ կիրառման հետ մեկտեղ, բարդացնում է ցանկացած գույքի օրինական

ծագման ապացուցումը: Եվրոպական դատարանը, նշելով, որ բուլղարական օրենքը անձանց վրա է դնում ունեցվածքի օրինական ծագման ապացուցման բեռը, միաժամանակ շեշտում է, որ «չի կարող անտեսել այն փաստը, որ տվյալ դեպքում նման կանխավարկածը գործում էր դիմումատուների համար վերը նկարագրված դժվարությունների հետ համակցված, մասնավորապես՝ 2012 թվականի օրենքի լայն շրջանակից բխող դժվարությունների հետ» (վճռի կետ 117): «Ավելին, Դատարանը համոզված չէ, որ եկամտի աղբյուրների «օրինականությունը» հեշտ ապացուցելի խնդիր է: «Todorov and Others»-ում (§ 208) այն վերաբերում էր, մասնավորապես, ներպետական դատարանների՝ վկաների ցուցմունքները միայն որպես որոշակի գործարքների ապացույց ընդունելու մերժմանը, ինչը մեծացնում էր դիմումատուների բեռը այն իրավիճակում, երբ նրանք արդեն բախվել էին երկար տարիներ առաջ իրենց ֆինանսական վիճակի հաստատման խնդրին» (վճռի կետ 119):

Եվրոպական դատարանը իր վճռի 121-րդ կետում շեշտում է. «Այնուամենայնիվ, անհանգստության առիթ է այն, որ, ի լրումն վերը թվարկված տարբեր գործոնների, 2012 թվականի օրենքում արված ակնհայտ ենթադրությունն այն է, որ բռնագանձման վարույթում մեղադրյալները ոչ միայն ներգրավված են եղել չճշտված հանցավոր կամ անօրինական գործունեության մեջ, այլև դա այդպես է եղել երկար տարիների ընթացքում (համեմատե՛ք Տոդորովի և մյուսների վճռով § 206 նկատառումները): Այս բնութագրական հատկանիշը բխում էր 2012 թվականի օրենքի ընդհանուր մոտեցումից, որն ավելորդ էր համարում որևէ նման գործունեություն հաստատելու ձգտումը, բայց, այնուամենայնիվ, ակնհայտորեն ենթադրում էր, որ դրանք հանդիսանում են բռնագանձման ենթակա ակտիվների աղբյուրներ: Թեև Դատարանը տեղյակ է, որ կազմակերպված հանցավորությունը երբեմն կարող է դիմել սեփականություն ձեռք բերելու ավելի բարդ մեթոդների, ինչը դժվարացնում է դրա ծագման հետազոծումը, նա չի կարող միաժամանակ չնկատել, որ 2005 թվականի օրենքում պարունակվող կարևոր երաշխիքը հանվել է 2012թ. օրենքից, մասնավորապես՝ բռնագանձման ենթակա ակտիվների և հիմնական հանցագործության միջև որոշակի կապ հաստատելու պահանջը: Նշենք նաև, որ Բուլղարիայի Գերագույն դատարանն իր 2018 թվականի դեկտեմբերի 7-ի հ. 4 «Մեկնողական որոշմամբ», հաշվի առնելով սույն գործի համապատասխան

փաստերը, բացահայտել է նման կապը պահպանելու անհրաժեշտությունը՝ մեկնաբանելով 2012 թվականի օրենքը որպես հանցավոր վարքագծի միջոցով ձեռք բերված գույքի թիրախավորման և քրեական դատավարության հետ կապի պահպանում: Այս եզրակացությունը, սակայն, չեղարկվեց խորհրդարանի կողմից՝ առանց որևէ կոնկրետ հիմնավորման և Բուլղարիայի Գերագույն դատարանի հիմնավորումների հետ առերեսվելու»:

Նման պայմաններում Եվրոպական դատարանը «նպատակահարմար է համարում, որքան հնարավոր է և սույն գործի առանձնահատկությունների լույսի ներքո, հետևել այն մոտեցմանը, որը հաստատված է «Տոդորովը և մյուսները» գործում: Այդ գործում [Եվրոպական դատարանը] հանգեց այն եզրակացությանը, որ որպեսզի 2005 թվականի օրենքով նախատեսված անհատների իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն համապատասխանի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, բռնագանձումը որոշող ներպետական դատարանները պետք է որոշ մանրամասներ ներկայացնեն այն հանցավոր վարքագծի վերաբերյալ, որով ենթադրվում է, որ առաջացել են բռնագանձման ենթակա ակտիվները, և հիմնավորված կերպով ցույց տան, որ այդ ակտիվները կարող էին լինել այդ վարքագծի արդյունքը. նման պահանջը դիտվում էր որպես բռնագանձման վարույթում պետության առավելությունների դեմ հակակշիռ, որը բխում է 2005 թվականի օրենքով նախատեսված՝ իրենց դեմ ուղղված միջոցները արդյունավետորեն վիճարկելու ամբաստանյալների կարողության սահմանափակումներից և որպես դիմումատուների իրավունքների հիմնական երաշխիք (տես այդ վճռի §§ 200-14-ը՝ § 215-ում ամփոփված մոտեցմամբ)» (վճռի կետ 122):

Հաշվի առնելով վերը նշված նկատառումները, նաև հղում կատարելով վերը նշված իր եզրակացությանը՝ Եվրոպական դատարանը կարևորում է, որ «ի հակակշիռ վերը քննարկված հնարավոր թերությունների, ներպետական դատարանները որոշ մանրամասներ ներկայացնեն այն քրեական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ, որոնցում ենթադրաբար ծագել են առգրավման ենթակա ակտիվները, և հիմնավորված կերպով ցույց տան, որ կարող է կապ լինել նման իրավախախտումների և խնդրո առարկա ակտիվների միջև» (վճռի կետ 124):

Եվրոպական դատարանի կողմից քննված առաջին գործում դիմումատուն դատապարտվել է քրեական հանցագործության՝ հարկերից խուսափելու համար: Այդ իրավախախտումն ինքնին ֆինանսական օգուտ չի բերել, քանի որ դիմումատուն, թեև որոշակի ուշացումով, վճարել է հարկը: Թեև, հակառակ դիմումատուի պնդմանը, բուլղարական դատարանները գտել էին, որ դիմումատուն չի ապացուցել օրինական եկամտի առկայությունը, որը կհիմնավորեր այն ակտիվների ձեռքբերումը, որոնց նկատմամբ բռնագանձում էր տարածվել, այդուհանդերձ Եվրոպական դատարանը հստակ ընդգծում է, որ «նման եզրակացությունն ինքնին բավարար չէ դիմումատուի գույքի բռնագանձումն արդարացնելու համար: Ինչպես նշվեց վերևում, որպեսզի բռնագանձումը համապատասխանի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին, ազգային իշխանությունները պետք է որոշ լրացուցիչ մանրամասներ ներկայացնեին քրեական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ, որոնք իբր հանգեցրել են վիճելի ակտիվների ձեռքբերմանը, նաև ցույց տային որևէ նման գործունեության և խնդրո առարկա ակտիվների միջև կապը (տե՛ս վերը, կետ 124)» (վճռի կետ 129): Եվրոպական դատարանը արձանագրում է, որ «դիմումատուի քրեական դատապարտումը որևէ կերպ նշանակալից չէ բռնագանձման մասին դատարանների որոշման համար: Հանցագործության և այն գույքի միջև, որոնց նկատմամբ բռնագանձում էր պահանջվում, որևէ կապ գոյություն չուներ, և ներպետական դատարանները հստակորեն հայտարարել են, որ 2012 թվականի օրենքով նախատեսված ընթացակարգը «անջատված է» քրեական դատավարությունից և դրանց արդյունքից (...): Փոխարենը, դատարանները համարել են, որ գույքը, որի համար բռնագանձում էր պահանջվում, պետք է բռնագանձվեր որպես «ապօրինի ձեռք բերված» միայն այն պատճառով, որ դիմումատուն չի ապացուցել որևէ օրինական եկամուտ՝ իրենց ձեռքբերումը հիմնավորելու համար» (վճռի կետ 130):

Առաջին դիմումատուի (Yordanov (application no. 265/17) հետ կապված՝ Եվրոպական դատարանը կատարում է հետևյալ եզրահանգումները.

«131. Այսպիսով, ազգային դատարանները չեն քննարկել որևէ հանցավոր գործողություն կամ վարչական իրավախախտում, որը կարող էր դառնալ բռնագանձման պահանջի ենթակա ակտիվների աղբյուր, կամ կապ հաստատել այդ ակտիվների և նման գործունեության միջև:

132. Ուստի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պահանջվող արդար հավասարակշռությունը, ինչպես վերը մեկնաբանվեց, այս դեպքում չի հաջողվել ձեռք բերել, և ցույց չի տրվել, որ դիմումատուի սեփականության նկատմամբ միջամտությունը համաչափ է որևէ օրինական նպատակի հետ, որը միջամտությունը կարող էր հետապնդել:

133. Հաշվի առնելով վերը նշվածը՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում»:

Երկրորդ դիմումի պարագայում («Bozadzhieva and Others» (application no. 26473/18) դիմողներից մեկի գույքը բռնագանձվել էր այն բանից հետո, երբ դիմումատուն դատապարտվել էր հարկերից խուսափելու և երեխայի կեղծ նպաստի ստացման համար: Եվրոպական դատարանը արձանագրում է հետևյալը.

«135. Ազգային դատարանները չեն քննարկել դիմումատուների կողմից որևէ այլ հանցավոր կամ անօրինական վարքագիծ: Դատարանի առջև վարույթի ընթացքում Կառավարությունը պնդում էր, որ դիմումատուների կողմից ստացված և քննվող ակտիվները ձեռք բերելու համար անհայտ չափով օգտագործված գումարները կարող էին լինել անօրինական կամ նույնիսկ քրեական ծագման (...), սակայն նման պնդումները մնացել են չապացուցված: Ավելին, դրանք երբեք չեն քննարկվել կամ հաշվի չեն առնվել ազգային դատարանների կողմից»: Եվրոպական դատարանը այստեղ ևս ընդգծում է, որ բուլղարական դատարանները չեն պնդել, որ դիմումատուի կողմից կատարված հանցագործությունները եղել են բռնագանձման ենթակա ակտիվների աղբյուրները: Բռնագանձումը որոշող դատարանները «երբեք չեն ձգտել կապ հաստատել այդ ակտիվների և հիմնական հանցագործությունների միջև՝ գտնելով, որ դա 2012 թվականի օրենքի պահանջը չէ»:

Եվրոպական դատարանը վճռի 138-րդ կետում «ևս մեկ անգամ կրկնում է իր վերը նշված եզրակացությունը, որ 2012 թվականի օրենքի համաձայն ցանկացած բռնագանձում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին և երաշխիքներին համապատասխանեցնելու համար ազգային իշխանությունները պետք է հաստատեին, որ որոշակի հանցավոր գործունեություն կամ վարչական իրավախախտում հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը և

արձանագրեին կապը նման գործունեության և խնդրո առարկա ակտիվների միջև (տե՛ս վերը՝ կետ 124): ...Դատարանը գտնում է, որ պահանջվող չափանիշը չի պահպանվել»:

2. «ՄԱՆԴԵՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ» ԳՈՐԾՈՎ 2024Թ. ՄԱՅԻՍ 22-Ի ՎՃԻՌԸ

Հիմնվելով 2021թ. հուլիսի 13-ի «Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» նախադեպային գործի վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) 2024թ. մայիս 22-ին վճիռ է կայացրել ընդդեմ Բուլղարիայի՝ «Մանդևը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» գործով:

Այս գործով դատարանը մեկ վճռով միացրել է հինգ դիմում: Առաջինը Մանդևի դիմումն է, նա խոստովանել է, որ 2004 թվականին շորթում է կատարել: Երկրորդ դիմումատուն՝ Գլավչևը, դատապարտվել է սեքսուալ թրաֆիքինգի համար 2003 թվականին: Երրորդ դիմումը վերաբերում է Ռաչևիին, որը դատապարտվել է կեղծ թղթադրամներ պահելու համար: Չորրորդ դիմումատուն Մարվակովն է, որը դատապարտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար ստեղծված կազմակերպված հանցավոր խմբին մասնակցելու և նույն տարում թմրամիջոցների ապօրինի շրջանառության փորձի համար: Ի վերջո, հինգերորդ դիմումատու Դիմովը դատապարտվել է մաքսանենգության համար 2007թ.:

Այս բոլոր գործերը լուծվել են Բուլղարիայի տարածաշրջանային տարբեր դատարանների կողմից, որոնք դիմումատուների դատապարտումից հետո կիրառել են 2005թ. «Հանցագործությունից ստացված եկամուտների բռնագանձման մասին» օրենքը:

Դատարանը, բոլոր դեպքերում, բացառությամբ Glavchev-ի և Glavchev Group OOD-ի, վճռել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուների ունեցվածքի բռնագանձման համար՝ որպես հանցագործությունից ստացված եկամուտ: Չորս դեպքերում ազգային դատարանները դիմումատուների հանցավոր վարքագծի և նրանց ունեցվածքի միջև պատճառահետևանքային կապի ապացույց չեն

ներկայացրել: Այդ իսկ պատճառով ՄԻԵԴ-ը ազգային դատարանների մոտեցումն անհիմն է համարել: Գլավչևի դեպքում ազգային դատարանն ապացույցներ է ներկայացրել գոյություն ունեցող պատճառահետևանքային կապի մասին, քանի որ սեռական թրաֆիքինգի գործունեությունը «տրամաբանորեն կարելի էր ենթադրել» որպես ֆինանսական օգուտներ: Ուստի այդ դեպքում Եվրոպական դատարանը Արձանագրության 1-ին հոդվածի խախտումը չի արձանագրել: Ընդ որում, բոլոր դեպքերում Դատարանը արձանագրել է նույն հոդվածի խախտում՝ դիմողների կողմից դատարանին վճարած բարձր վճարների համար:

Իր վճռի պատճառաբանական մասում Եվրոպական դատարանը նախ արձանագրում է, որ ներկայումս քննվող բողոքը նույնատիպ է այն բողոքներին, որոնք քննել է Դատարանը՝ «Todorov and Others» ուղենիշային վճռում (...), որը նույնպես վերաբերում էր հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձմանը 2005թ. օրենքի հիման վրա» (վճռի կետ 93): Այնուհետև Դատարանը վճռի 94-97-րդ կետերում ամփոփում է այդ ուղենիշային վճռի հիմնական բովանդակությունը.

«94. Դատարանը նշված առաջնորդող վճռում մատնանշել էր որոշ հնարավոր թերություններ 2005թ. օրենքում և դրա կիրառման եղանակում: Մասնավորապես, այն ընդգծել էր օրենքի կիրառման լայն շրջանակը՝ ինչպես նախնական հանցագործությունների տեսակների, այնպես էլ ստուգման ենթակա ժամանակաշրջանների առումով, այդ թվում՝ քաղաքացիների վրա դրված դժվարությունները՝ ապացուցելու իրենց գույքի «օրինական» ծագումը մի ժամանակահատվածում, որը նշանավորվել էր ինֆլացիայով և տնտեսական վերափոխումներով, ինչպես նաև այն կանխավարկածը, ըստ որի ցանկացած գույք, որի օրինական աղբյուրը չի հաստատվել, ենթադրվում է հանցավոր ծագում ունեցող:

95. Դատարանի դիրքորոշումն այն էր, որ այս թերությունները ինքնին բավարար չէին՝ ցանկացած բռնագանձում 2005թ. օրենքի հիման վրա համարելու Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Սակայն նշված թերությունները ստեղծում էին զգալի բեռ գույքի բռնագանձման գործով ներգրավված քաղաքացիների վրա: Հետևաբար չափազանց կարևոր էր, որպեսզի ազգային դատարանները հավասարակշռող եղանակով հիմնավորեին, թե ինչ քրեական վարքից է ծագել բռնագանձման ենթակա գույքը և ապացուցեին

պատճառահետևանքային կապը՝ այդ վարքի և բռնագանձվող գույքի միջև (նույն վճիռ, §§ 210–215):

96. Դատարանը, կիրառելով այս չափանիշները, «Todorov and Others» գործով եզրակացրել էր, որ եղել է Առաջին արձանագրության 1-ին հոդվածի խախտում այն դեպքերում, երբ ազգային դատարանները չէին հիմնավորել պատճառահետևանքային կապի գոյությունը, այլ միայն հիմնվել էին Օրենքի 4-րդ հոդվածի մեջ ամրագրված կանխավարկածի վրա, այն է՝ որ ապացուցված օրինական ծագում չունեցող ցանկացած գույք ենթադրվում է հանցավոր ծագում ունեցող (նույն վճիռ, §§ 217–250):

97. Մյուս կողմից, Դատարանը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի գտել այն դեպքերում, երբ ներպետական դատարանները ողջամտորեն ցույց են տվել պատճառահետևանքային կապի առկայությունը բռնագանձման ենթակա ակտիվների և դիմողների հանցավոր վարքագծի միջև: Այդ դեպքերում Դատարանը հայտարարել էր, որ սկզբունքորեն պետք է հետևի ազգային դատարանների փաստական գնահատականներին, եթե այդ գնահատականները կամայական կամ ակնհայտորեն անտրամաբանական չեն եղել (նույն վճիռ, §§ 216 և 251–281)»:

Այսպիսով, «Մանդևը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» գործով վճիռը մեկ անգամ ևս վերահաստատում է 2021 թվականին «Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի» նախադեպային գործի առանցքային նշանակություն ունեցող հիմնական պատվիրանը. բռնագանձման վարույթում գույքի և հանցավոր վարքագծի միջև պատճառահետևանքային կապի անտեսումը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

3. ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄԻՋԵՎ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Չնայած ՄԻԵԴ վճիռներում արտացոլված պարտադիր պահանջին, որ ապօրինի գույքի բռնագանձման վարույթում անհրաժեշտ է գույքի և հանցավոր

վարքագծի միջև պատճառահետևանքային կապի հաստատումը, Հայաստանի իրավակիրառ պրակտիկայում դատարանները շարունակաբար անտեսում են այդ իմպերատիվ պահանջը: Դատարանները, որպես կանոն, ելնում են այն բանից, որ Հայաստանի օրենքը թույլ է տալիս գույքը բռնագանձել առանց գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև կապը հաստատելու հանգամանքի: Դատարանների նման գործելակերպը ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի այն հստակ պահանջին, ըստ որի. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: ՄԻԵԴ 2021թ. Տոդորովի գործով որոշումը ուղենիշային է, այն վերահաստատվել է ՄԻԵԴ 2023-2024թթ. կայացված բազմաթիվ վճիռներով: Այդ վճիռը չի սահմանափակվում միայն Բուլղարիայի 2005թ. և 2012թ. օրենքների և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ մեկնաբանություններով, այլ արձանագրում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում բոլոր այն դեպքերում, երբ տվյալ պետությունը ապօրինի գույքի բռնագանձման վարույթում չի հաստատում հանցագործության և դրա արդյունքում ստացված ապօրինի գույքի միջև պատճառահետևանքային կապը: Ակնհայտ է, որ Հայաստանի դատարանների կողմից այդ կապի անտեսումը հիմք է դառնալու ՄԻԵԴ-ում այդ որոշումները կոնվենցիայի խախտում ճանաչելու համար:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: